

կուած են թերթերուն թիւը ցուցընելու համար: Իւրաքանչիւր թերթը նշանակուած է յաջորդ կերպով. ա. — ա. ք. — ա. ք. — ա. ք. — ք. — ք. ք. — ք. ք. — ք. ք. այսինքն՝ ա թերթին առաջին, երկրորդ, երրորդ թուղթը եւ այլն: Ասոր յաջորդող չորս թուղթին վրայ բան մը նշանակուած չէ: Ետքէն կու գայ ք թերթն, իրեն յաջորդող ք. ք. — ք. ք. — ք. ք. թղթերովն եւ կը շարունակուի մինչեւ ք, որմէ կ'երեւայ թէ գիրքն ու թը թերթ է: Սակայն վերջին թերթն ամբողջ չէ, երեք թուղթ միայն ունի: Եւ այսպէս ամբողջ գիրքն է՝ է թերթ \times 8 թուղթ = 56 թուղթ, որուն վրայ աւելցուի ք թերթին երեք թուղթն ալ, կըլլայ՝ 59 թուղթ:

Տպագրութիւնն, ինչպէս ըսինք, ըստ բաւականի մաքուր եւ կանոնաւոր է, ունի կարգաւորեալ կիտաղրութիւն եւ զլեատիր: Քառերն իրարմէ բաժնուած են. այնպէս որ կրնայ ըսուիլ թէ առաջիկայ գիրքն՝ իւր ժամանակին պարագաներուն նայելով, իր սեռին մէջ ամենակատարեալն է: Տպագրութեան սխալներն ալ նուազ են, ուստի եւ տպագրութեան գիտութեան ամէն օրէնքները վրան կ'երեւան, եւ որ ամէնէն նշանաւորն է, տպագրութիւնը կրկնագոյն է, սեւ ու կարմիր: Սակայն ամբողջ գիրքը մէկ տեսակ գրով միայն տպուած է, որ թէպէտ մէկ կողմանէ աղքատութեան նշան է, սակայն մէկալ կողմանէ յայտնի նշան ու ապացոյց է միանգամայն հնութեան, այսինքն ժամանակի մը, երբ այլեւայլ գրեր փորագրել ու ձուլել տալ այնպէս գիւրին չէր:

Եւ ինչպէս որ երեւելի պատկերահամներ սօվոր են իրենց անունն նկարին տակ գրել, — ինչպէս որ երեւելի գործատանց արտագրութիւնքն գործատան սեպհական նշանը կը կրեն, այսպէս նաեւ մեր տպագրութիւնը, իւր յատուկ նշանն ունի վերջին երեսին վրայ, անուղղակի հասկըցնելով իւր ժամանակակիցներուն եւ ապագայ սերնդեան՝ թէ կը պարծի հրատարակած սոյն գործքին վրայ:

Ինչպէս ըսինք, գիրքը Պարզասոր մըն է Հայոց 961 տարւոյն, եւ կը պարունակէ Պարզատումարէն զատ՝ նշանացոյց մը, որուն կը յաջորդեն ստորաբաժանեալ մասունք՝ 1. Կաղանբացոյց, 2. Երազացոյց, 3. Ծննդեան Գոչացոյց եւ 4. Կարծնախաղաց: Ոչ յառաջաբան, ոչ յիշատակարան եւ ոչ ուրիշ մասնաւոր յայտարար նշան մ'ունի:

Այս է ահաւասիկ Վիեննայի Մխիթա-

րեանց Մատենադարանին մէջ գտնուած հետաքրքրական մատենն, որ յանձնուեցաւ առաջիկայ տողերը գրողին աչքէ անցընելու եւ քննելու:

Հոս առաջին ինգիրն այն է, թէ առաջիկայ հրատարակութիւնն ո՞ր տպուած է եւ երբ:

Այս կրկին հարցման պատասխան տալն առայժմ գժուարին է, ժամանակը կրնայ միայն յագեցուցիչ պատասխան տալ:

Գրքին վրայ վերջիշեալ 961 թուականէն զատ՝ չկայ թուական մը, որով տպագրութեան տարին կարենայինք ճշգիւ որոշել: Այսու ամենայնիւ զօրաւոր կոռուան մըն է այս 961 թուականը, որով կրնանք քանի մը քայլ առնուլ եւ հետեւութեանց հասնիլ: Մատենին առաջին եւ զլեատիր ճակտին վրայ մէջ տեղը կայ միայն « Այս է պարզայտումար հայոց »: Երկրորդ երեսն կայ՝ « Գիր տարւոյ »: Իսկ երրորդ երեսն կը սկսի բուն գիրքն այսպէս. « Իննասոր. — Վախճան. — Գիրն նուն է. եւ արձանութիւն ի վերեւն կարէն է. եւ այն կարգաւ երկուս. . . »: Ուստի սօնացոյցը կը սկսի Հայոց 961 = ք. 1512 թուականին:

Տօնացոյց կամ տոմար մը շինողին առաջին գործքն է տարւոյն թիւը դնել, այն տարւոյն թիւը, որուն մէջն է, կամ որուն համար տոմարը կը շինուի: Ուստի բոլորովին անհաւանական է, թէ մատենագիրն իրմէ շատ ետքն եկող տարւոյ մը տարեթիւը դնէ իւր գրուածքին վրայ: Բայց չունի նաեւ բնաւ պատճառ մը մատենագիրն՝ անցեալ տարւոյ թուականը դնել գրած ու անշուշտ ժողովրդեան գործածութեան համար շինած մատենին՝ մասնաւոր տոմարին վրայ, որ նպատակին չէր կրնար ծառայել: Եւ իրօք ինչո՞ւ ներկայ տարւոյն մէջ տպուած սօնացոյցին վրայ, — օրինակի աղագաւ, դնենք ասկէ 50 տարի յառաջ անցած թուական մը, այն է 1839, եւ կամ նոյնչափ տարի ետքը՝ 1939 թուականը:

Յայտնի է ուրեմն, որ առաջիկայ մատենը տպուած է կամ այն տարին, զոր կը ցուցընէ թուականը, այսինքն՝ 961 = 1512, եւ կամ քանի մը ամիս, եւ գուցէ նոյն իսկ տարի մը յառաջ սկսած է, որպէս զի նշանակուած 961 տարւոյն համար տոմարը պատրաստ ու գործածելի ըլլայ:

Այս կը ցուցընեն տպագրութեան արտաքին օրպիսութիւնը, գրերուն մեծութիւնն եւ աճեւութիւնը, վերջապէս այն իրական տարբերութիւնն՝ որ կայ առաջիկայ մատենին եւ